Իրավական տեղեկություններ՝ փաստաթուղթ չունեցող աշակերտների վերաբերյալ

Աշակերտի իրավունքները

Կալիֆորնիայում, բոլոր աշակերտները, ներառյալ փաստաթուղթ չունեցող աշակերտները դպրոց հաճախելու և խտրականությունից, ոտնձգությունից, կովազանությունից, վայրագությունից և ահաբեկումից զերծ ուսումնական միջավայրում սովորելու իրավունք ունեն:

Հ. – Արդյոք դպրոցները աշակերտների գաղթականական կարգավիճակի վերաբերյալ տեղեկություններ են պահանջո՞ւմ:

Պ. – Ոչ: GUSD-ը աշակերտի տարիքի և բնակության վերաբերյալ է տեղեկություններ պահանջում, ոչ թե գաղթականական կարգավիճակի: GUSD-ը ընդունում է աշակերտի տարիքը և բնակությունը հաստատող հետևյալ փաստաթղթերը՝

Տարիքը և անունը հաստատող փաստաթղթեր՝

1. Ծննդյան վկայական ԿԱՄ
2. Անձնագիր ԿԱՄ
3. Մկրտության վկայական կամ հիվանդանոցի պաշտոնական արձանագրություն ԿԱՄ
4. Alien Card ԿԱՄ
5. Քաղաքացիության վկայական ԿԱՄ
6. Դպրոցի փաստաթղթեր (եթե Գլենդելի մյուս դպրոցներից է տեղափոխվում)

Բնակությունը հաստատող փաստաթղթեր՝

1. Երկու (2) բնօրինակ վերջին կենցաղային սպասարկման վճարագիր ծնողի/խնամակալի անունով ԿԱՄ
2. Տուն գնելու փաստաթղթեր և մեկ «1» կենցաղային սպասարկման վճարագիր ԿԱՄ
3. Վարձակալության պայմանագիր և մեկ «1» կենցաղային սպասարկման վճարագիր

Հ. – Ի՞նչ կպատահի իմ երեխային, եթե գաղթականական հարցերով զբաղվող պաշտոնյաները դպրոց գան:

Պ. – Գաղթականության և մաքսատան իրավապահ մարմինները (ICE) առանց գերատեսչի կամ նրա փոխարինողի թույլտվության չեն կարող դպրոց կամ կրթաշրջանի տարածք մուտք գործել:

Հ. – Արդյոք անձնակազմից պահանջվո՞ւմ է, որ ICE-ին, ոստիկանությանը կամ կառավարական պաշտոնյաներին թույլատրել աշակերտների անձնական գործերը ստուգելու:

Պ. – Աշակերտների գործերը ստուգել կթույլատրվի միայն այն ժամանակ, երբ դիմող գործակալությունը կունենա դատարանի հրամանը կամ դատական ծանուցագիրը FERPA-ի կամ ներգաղթական օրենքների և կանոնների համաձայն:

Ծնողի իրավունքները

Բոլոր ծնողները, անկախ իրենց իրավական կարգավիճակից, իրենց երեխաների կրթության աշխատանքներին մասնակցելու իրավունք ունեն և խրախուսվում է նրանց մասնակցությունը:

Հ. – Արդյոք փաստաթղթեր չունեցող ծնողներից մատնահետք է պահանջվո՞ւմ դպրոցում կամավոր աշխատելու համար:

Պ. – Այո: Բոլոր ծնողներից պահանջվում է մատնահետք տալ դպրոցում կամավոր աշխատելու համար: Մատնահետքի նպատակը գաղտնի է և միայն կրթաշրջանի կողմից է օգտագործվում՝ երեխաների և անձնակազմի անվտանգության համար (օրինակ՝ կամավոր աշխատողը անչափահասների հետ սեռական ոտնձգությունների կամ թմրանյութերի պատճառով դատապարտված չի եղել):

Հ. – Եթե ծնողը գաղթականական հարցերով բանտարկված է, արդյոք կրթաշրջանից պահաջվո՞ւմ է երեխային հանձնել ICE-ին կամ այլ գաղթականական գործերով զբաղվող պաշտոնյաներին:

Պ. – Ոչ: Աշակերտները կհանձնվեն միայն լիազորված խնամակալին կամ արտակարգ իրավիճակների քարտի վրա նշված անձանց: Այսպիսի մտահոգություն ունեցող ծնողները պետք է նախապես ազգականների հետ այս խնդիրը կարգավորեն և վստահանան, որ քարտի տեղեկությունները արդիական լինեն: